մտություն է խպիպային ամիլոփրոզի ախտորոշման համար: Այստեղ անհրաժեշտություն կա ամիլոփրային խպիպը տարբերակելու թիրեռիդիտից, վահանագեղձի ուռուցքներից և ուռուցքանման գոյացություններից, որի համար կարևոր է կլինիկական հետազոտության տվյալների մանրակրկիտ վերլուծությունը:

ՊՆ պայմանավորված յարդի ամիլոփրային ախտահարումների հայտնաբերման համար կիրառվող պունկցիոն ասպիրացիոն բիոպսիոն եղանակը, որը ընդունված է մի շարք հեղինակների կողմից [8], առանձնապես ինֆորմատիվ չէ, քանզի յարդում ամիլոփրն արտահայտվում է հիվանդության համեմատաբար ուշ շրջաններում: Փայծաղը թեև հաճախ և առավել վաղ է ախտահարվում, սակայն պունկցիոն բիոպսիան նպատակահարմար չէ՝ ելնելով բարդությունների առաջացման վտանգից:

Ուսումնասիրված դեպքերից միայն երկուսում համակարգային ամիլոփրային ախտահարումներ չեն հայտնաբերվել, որտեղ մահվան պատճառ են դարձել մի դեպքում՝ սուր միելոբլաստային լեյկոզով պայմանավորված խոցանեկրոտիկ բարդությունները և միացած սեպսիսը, մյուսում՝ թոք-սրտային անբավարարությունը:

Այսպիսով՝ ՊՆ կլինիկական և ձևաբանական պատկերը հաճախ տարբնույթ է, և ձևաբանորեն գերակշռող որոշ ախտահարումներ կլինիկորեն կարող են չդրսնորվել, կամ պարզապես չհանգեցնել օրգանային անբավարարության: Մինչդեռ ՊՆ պայմանավորված նեֆրոպաթիկ ամիլոփրոզը հաճախ է գերակշռում և ձևաբանորեն և կլինիկորեն, իսկ օրգանային որոշ ախտահարումներ, որոնք ձևավորվում են երիկամայինին զուգահեռ, կարող են հանգեցնել օրգանային անբավարարության և մահվան պատճառ դառնալ մինչև խրոնիկ երիկամային անբավարարությունն ու ուրեմիան:

Ներկայումս ՊՆ պայմանավորված երկրորդային ամիլոփրոզի արդյունավետ, քիչ վնասող կամ ոչ ինվագիվ ախտորոշիչ մեթոդի մշակումը արդի խնդիր է մնում և պահանջում հետազա հետազոտություններ:

Поступила 07.07.11

Клинико-морфологическая характеристика органных поражений при периодической болезни

Г.А.Еганян, С.В.Амбарцумян, Л.С.Марданян

Периодическая болезнь (ПБ) – наследственное заболевание, которое проявляется лихорадкой и кратковременными серозитами: перитонитом, плевритом, перикардитом. Проведен клинико-морфологический анализ 185 больных с ПБ и 54 секционных наблюдений умерших с диагнозом ПБ. Почечный амилоидоз, как осложнение заболевания, был выявлен у 47 больных в различных стадиях. Выраженность амилоидоза в различных случаях и степень поражения отдельных органов вариабельны. У больных были выявлены, кроме суставного и кожного синдромов, пульмонологические, гастроэнтерологические, нефрологические (иные кроме амилоидоза почек), эндокринологические, ревматологические, неврологические и гематологические синдромы. Проведенными клинико-морфологическими параллелями выявлены доминирующие проявления клиники, а также патоморфологии и танатогенеза ПБ.

Clinical-morphological characteristics of organs affections in periodic disease

G.A.Yeganyan, S.V.Hambardzumyan, L.S.Mardanyan

Periodic disease or Familial Mediterranean fever (FMF) is characterized by recurrent fever, peritonitis, pleuritis, pericarditis, skin lesions, arthritis. Clinical-morphological analysis of 185 patients with FMF and 54 cadaver dissection cases were done. Renal amyloidosis in different stages is revealed in 47 cases as a main complication of disease. Expression of amyloidosis is various in different organs. Arthropathies, skin lesions, accompanied by pulmonary, gastroenterological, nephrological (besides kidney amyloidosis), endocrinological, rheumatological, neurological and hematological syndromes are also revealed. Clinical-morphological parallels have revealed the main manifestations of the clinical picture of the disease in pathomorphological and in tanatogenesis structure.

Գրականություն

1. Եղանյան Գ.Ա. Պարբերական հիվանդության նոպաների ախտածազման և ամիլոիդոզի զարգացման նոր վարկած, Արյուն, Երևան, 2005, 1 (1), էջ 80-85.
2. Նազարեթյան Է.Ե., Հակոբյան Գ.Ա. Պարբերական հիվանդություն: Երևան, 1993:
3. Աշտազարյան Վ.Ա., Տօրօսյան Ե.Խ., Օգանյան Հ.Ա. Исследование популяционной частоты периодической болезни в условиях Еревана. В сб.: Материалы научно-практической конференции педиатров (14-15 окт. 1993г.). Ереван, 1994, с.52.

4. *Айвазян Ал.А., Саргсян С.Г., Саркисян А.Г., Джавадян А.Ю.* Частота амилоидоза почек у больных периодической болезнью в зависимости от частоты приступов в детском возрасте. Материалы научно-практической конференции педиатров. Ереван, 1999, с. 11.
5. *Ben-Chetrit E.* Familial Mediterranean fever and renal amyloidosis-phenotype-genotype correlation, treatment and prognosis. *J. Nephrol.*, 2003, 16(3):431-434.
6. *Cattan D., Dervichian M., Dode C. et al.* MEFV mutations and phenotype-genotype correlations in north African Jews and Armenians suffering from FMF. FMF II International conference, 3-7 May 2000, Antalya-Turkey. Lectures and Abstracts, §79.
7. *Fealey Me., Edwards W.D., Grogan M., Dispenzieri A.* Primary cardiac amyloidosis. *Cardiovasc. Pathol.*, 2006; 15(6); p. 331-335.
8. *Gangane.N, Anhu, Shivkumar V.B. , Sharta S.* Aspiration biopsy as a diagnostic method for hepatic amyloidosis. *Acta Cytol.*, 2006; 50(5), p.574-576.
9. *Grateau G., Jeru I., Cazeneuve C., Rouagne S., Ravet N., Duquesnoy P., Cuisset L., Dode C., Delpech M., Amselem S.* Amyloidosis and autoinflammatory syndromes. *Current Drug Targets Inflammation and Allergy*, 2005, 4, p.57-65.
10. *Halloush R.A., Lavrovskaya E., Mody D.R., Lager D., Troung L.* Diagnosis and typing of systemic amyloidosis: The role of abdominal fat pad fine needle aspiration biopsy. *Cyto Journal*, 2009, 6:24.
11. *Pras M.* FMF: Past, present and future. *Clin. and Exper. Rheumatol.*, 2002, v.20, 4 (26), p.66.

**Նեյրոսպեցիֆիկ էնոլազայի տեղեկատվականության
որոշումը որպես երեխաների հոգեշարժական
զարգացման խանգարումների վաղ
ախտորոշման միջոց**

Ս.Ֆ. Աղամյան

*ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտ
0051, Երևան, Կոմիտասի պող., 49/4*

Բանալի բառեր՝ նեյրոսպեցիֆիկ էնոլազա, հոգեշարժական զարգացում, նորածիններ

Երեխաների հոգեշարժական զարգացումը (ՀՇԶ) հոգեկան և մարմնական առողջության կարևորագույն ցուցանիշն է: Այսպես կոչված կոգնիտիվ ներոլոգիայի վերջին տարիների արագընթաց զարգացումը պարզ և պատկերավոր ցույց է տալիս բժշկական գիտության այս ճյուղի կարևորությունը և միաժամանակ ընդգծում երեխաների մոտ կոգնիտիվ զարգացման խանգարումների խնդրի սրությունը, որը ունի ոչ միայն բժշկական, այլ հսկայական սոցիալական նշանակություն [7,10,12,20]:

Հոգեկան ֆունկցիաների (խոսք, մտածելակերպ, հիշողություն) կայացման ուշացումը կամ դանդաղումը հաճախ հստակ արտահայտվում է այն տարիքում, եթե առաջանում է դրանց ռեալիզացիայի ակտիվության պահանջարկի մեծացում: Կյանքի առաջին ամիսներին հոգեշարժական, ինչպես նաև էմոցիոնալ զարգացման շեղումները պետք է կողմնորոշեն մանկական բժիշկներին՝ ցուցաբերել նման երեխաներին լայնածավալ բժշկական օգնություն՝ ամենաբարձր արդյունքի ստացման ակնկալիքով [7,10-12,17,20]: Կենտրոնական նյարդային համակարգի (ԿՆՀ) պերինատալ և հետազայում ձեռքբերովի ախտահարման ախտորոշման, բուժման և ռեարիլիտացիայի հնարավորինս վաղ սկիզբը թույլ է տալիս հասնել կանխորոշիչ առավել բարեհաջող ելքերի: Վերջին հաշվով հենց այս հանգամանքն է հաճախ օգնում խուսափել հաշմանդամացումից և հասնել երեխաների կյանքի առավել բարձր որակի [17]:

Բազմաթիվ ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ կլինիկական հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ ԿՆՀ-ի

ախտահարման բնորոշ ախտանիշները ի հայտ են զալիս միայն զիստիեղի բարդ կառուցների ախտահարման ժամանակ [10,12,20]: Բազմաթիվ վնասակար ազդեցություններ, որոնք ազդում են էմբրիոնի և պտղի վրա զարգացման ընթացքում, չեն կարող անհետևանք անցնել [4,15]: Կյինիկափորձարարական հետազոտություններով ապացուցված է, որ երեխաների մոտ նյարդային համակարգի հիվանդությունների մեծ մասը սկիզբ է առնում զարգացման ներարգանդային շրջանից և իր արտահայտությունն է գտնում կյանքի նեռնատալ և պոստնատալ շրջաններում [2,4,6,15,18,19]:

Հոգենյարդաբանական հաշմանդամություն ունեցող երեխաների հիմնական կոնտինգենտը բարձր ռիսկի խմբի նորածիններն են, իսկ վնասող հիմնական գործոնը հիպօրքիան է [6,18]: Այն առաջանում է պտուղ-ընկերքային արյան շրջանառության խանգարումների ժամանակ, որի հետևանքով ԿՆՀ-ի պերինատալ հիպօրքիկ ախտահարման խնդիրը ձեռք է բերում հատուկ արդիականություն: Ընդ որում պտուղ-ընկերքային մորֆոֆունկցիոնալ խանգարումների դետերմինացիայի հետևանքով նկատվում է բնածին հիվանդությունների աճի միտում [15,18,19]: Վերը նշվածը հաճախակի է հանդիպում սումատիկ, գինեկոլգիական և մանկաբարձական բարդացած անամնեզով մայրերից ծնված նորածինների մոտ [4,10,19]:

ԿՆՀ-ի պերինատալ ախտահարման իրական հաճախականությունը հնարավոր չէ ճշտել, քանի որ չկան ներոլոգիական նորման ախտաբանությունից տարանջատող հստակ չափորոշիչներ [2,11]: Սերկայումս գլխուղեղի հիպօրքիկ-իշեմիկ ախտահարման ախտորոշումը հիմնականում հիմնվում է կյինիկա-անամնեստիկ և սոնոգրաֆիկ չափորոշիչների վրա: Սակայն միշտ չէ, որ կյինիկական ախտանիշները համընկնում են նեյրոսոնոգրաֆիայի արդյունքների, իսկ հետազյում էլ ՀՇԶ տեմպերի հետ: Ընդ որում, հաճախ են հանդիպում այն դեպքերը, երբ երեխաների կատամնեզում կան ծանր ներոլոգիական դեֆեկտներ, իսկ նեռնատալ շրջանում նրանք ունեցել են նորմալ ներոլոգիական ստատուս և հակառակը՝ ներոլոգիական ծանր ախտաբանությամբ նորածինները կատամնեզում ունենում են ՀՇԶ նորմալ տեմպեր [7,12,18]:

Նյարդային համակարգի վնասման մարկերների ճշտումը և նրանց պաթոգենետիկ նշանակության հիմնավորումը վաղ ախտորոշման և վիճակի ծանրության գնահատման, բուժման հնարավորին չափ վաղ սկզբի համար ունեն հսկայական նշանակություն [1,8,14,22]: Նեռնատալ շրջանում ԿՆՀ-ի վիճակի գնահատման տեխնիկական հնարավորությունների լայնացումը կմեծացնի ուղեղի պերինատալ ախտահարումների բացահայտման հաճախականությունը և կվերացնի

նշված թերությունները: Այս առումով վերջին տարիներին սկսել են ակտիվորեն քննարկել օբյեկտիվ լաբորատոր ցուցանիշների օգտագործումը, որոնք վկայում են ԿՆՀ-ի անբարեհացող վիճակի մասին [3,9,13,21]: Օտարերկրյա զիտնականների կողմից կատարված մի շարք հետազոտություններ վկայում են ՆՍԷ-ի (նեյրոսպեցիֆիկ էնոլազա) ախտորոշիչ նշանակության օգտին [5,16]: Վերջին տարիների ուսումնասիրություններում հայտնվեցին հաղորդագրություններ պերինատալ հիպօքսիա տարած երեխաների կենսաբանական հեղուկներում բիոքիմիական (նեյրոսպեցիֆիկ էնոլազա, միելին հիմնական սպիտակուց, գլխոֆիբրիլյար թթու սպիտակուց) ցուցանիշների վաղաժամ որոշման տեղեկատվականության վերաբերյալ [1,5,10,22]: Ա. Բոխազի և Մ. Կոլյերի կողմից կատարված փորձարարական ուսումնասիրություններով [5] ցույց տրվեց, որ ՆՍԷ-ի մակարդակի բարձրացումը կախված է զիտուղեղի վնասման ծանրության աստիճանից: Նոյն հեղինակների կողմից հետազոտվել են մենինգիտով, մենինգուցեֆալիտով երեխաներ: Արդյունքում բացահայտվել է արյան մեջ էնոլազայի մակարդակի և ախտաբանական պրոցեսի ծանրության միջև եղած կոռելյացիոն կապը:

Նեյրոսպեցիֆիկ էնոլազան ԿՆՀ-ի ներքջային ֆերմենտ է, որը հանդիպում է նեյրոէկտոպերմալ ծագման բջիջներում (զիտուղեղի նեյրոններում և պերիֆերիկ նյարդային հյուսվածքում): Ներկայումս ՆՍԷ դիտարկվում է որպես նեյրոնների վնասման առավել բնորոշ մարկեր, ծառայում է որպես ինդիկատոր՝ ԿՆՀ-ի դիֆերենցվածության աստիճանի որոշման համար (ՆՍԷ հայտնաբերվում է նեյրոնային դիֆերենցման համեմատաբար ուշ փուլերում, սինապտոգենեզին զուգահեռ, այսինքն 22-շաբաթական հղիությունից հետո) [5,9,22] և հանդիսանում է բոլոր դիֆերենցված նեյրոնների ներկայումս հայտնի, փաստացիորեն ընդհանուր միակ մարկերը: ԿՆՀ-ի ծանր ախտահարմամբ երեխաների մոտ ՆՍԷ-ի բարձր մակարդակը բացատրվում է հեմատոնցեֆալիկ բարյերի վնասմամբ և ուղեղ-արյուն ուղղությամբ թափանցելիության բարձրացմամբ (թթվածնային անբավարարութան ազդեցության տակ) [5,16]: ՆՍԷ կենսաբանորեն բավականին կայուն նյութ է և այդ պատճառով ԿՆՀ-ի պերինատալ ախտահարման ախտորոշման, ինչպես նաև ՀՇԶ խանգարումների կանխորոշման նպատակով՝ ՆՍԷ-ի որոշումը կարելի է համարել օպտիմալ [1,13]: Հետազոտության մեջ որպես ԿՆՀ-ի վնասման ախտորոշման, իսկ հետազույթ էլ ՀՇԶ տեմպերի կանխորոշման մարկեր է վերցվել ՆՍԷ:

Սոյն հետազոտության նպատակը նեյրոսպեցիֆիկ էնոլազայի տեղեկատվականության որոշումն է՝ որպես երեխաների հոգեշարժական զարգացման խանգարումների վաղ ախտորոշման միջոց:

Նյութը և մեթոդները

Հետազոտությունը իրականացվել է 136 երեխաների մոտ, որոնցից 20-ը ծնվել են առողջ մայրերից, նորմալ ընթացքով հղիությունից և վաղ նեռնատալ շրջանում գնահատվելով որպես առողջ նորածիններ՝ կազմել են հսկիչ խումբը: Այս խմբի երեխաները կյանքի առաջին վեց ամիսների ընթացքում ունեցել են ՀՇԶ նորմալ տեմպեր: Մյուս 116 երեխաները ծնվել են հետացիայի տարբեր ախտաբանությամբ զուգակցված հղիություններից և ունեցել են ՀՇԶ տարբեր տեմպեր (հետազոտվող խումբ): Այս խումբը ըստ ՀՇԶ տեմպերի բաժանվել է 4 ենթախմբերի: ՆՍԷ որոշվել է ինչպես հետազոտվող, այնպես էլ հսկիչ խմբերի բոլոր նորածինների պորտալարային արյան շիճուկում, ծնվելուց անմիջապես հետո՝ իմունահեմիլյումինեսցենտային մեթոդով, թեստ-հավաքածուների միջոցով: Հետազոտության մեջ օգտագործվել են երեխաների կյանքի առաջին 6 ամիսների ՀՇԶ տեմպերի ուսումնասիրության արդյունքները:

Արդյունքները և քննարկումը

Հետազոտության ընթացքում իրականացվել է պորտալարային արյան մեջ ՆՍԷ-ի մակարդակի համեմատական վերլուծություն՝ ըստ ՀՇԶ տեմպերի բաժանված ենթախմբում: ՆՍԷ-ի մակարդակը հետազոտվող և հսկիչ խմբերում ունեցել է հետևյալ պատկերը (աղ.):

Աղյուսակ
ՆՍԷ-ի մակարդակը ըստ ՀՇԶ բախչված ենթախմբերում

| Ցուցանիշ | Հսկիչ խումբ | 1-ին ենթախումբ n = 9 | 2-րդ ենթախումբ n = 21 | 3-րդ ենթախումբ n = 57 | 4-րդ ենթախումբ n = 10 |
|------------|----------------|-----------------------------------|--|---|--|
| NSE, մկգ/լ | 7,02±0,53 | 7,06±0,55 p ₁ =N.S. | 23,47±1,11 p ₁ <0,001 p ₁₋₂ <0,001 | 56,61±2,01 p ₁ <0,001 p ₁₋₃ <0,001 p ₂₋₃ <0,001 | 88,55±1,70 p ₁ <0,001 p ₁₋₄ <0,001 p ₂₋₄ <0,001 p ₃₋₄ <0,001 |

p₁, p₁₋₂, p₁₋₃ – վիճակագրորեն հավաստի տարբերություն համապատասխան հսկիչ և 1, 1 և 2, 1 և 3 և այլն խմբերի միջև:

1-ին ենթախումբը կազմել են հետազոտվող խմբի բոլոր այն երեխաները, որոնց մայրերի մոտ հղիությունը զուգակցված է եղել

հեստացիայի այս կամ այն ախտաբանությամբ, սակայն երեխաների մոտ գրանցվել են հոգեշարժական զարգացման արագ տեմպեր (արագ զարգացում - ԱԶ): Այս ենթախմբում ՆՍՀ-ի միջին մակարդակը կազմել է $7,06 \pm 0,55$ ($p_1=N.S$): 2-րդ ենթախմբում ընդգրկվել են երեխաներ, որոնց մայրերի մոտ ներկա հղիությունը զուգակցված է եղել հեստացիայի ախտաբանությամբ, իսկ երեխաների մոտ գրանցվել է ՀՇ մոտավոր տեմպեր (մոտավոր զարգացում - ՄԶ): Այս ենթախմբում ՆՍՀ-ի միջին մակարդակը կազմել է $23,47 \pm 1,11$ ($p_1<0,001$; $p_{1-2}<0,001$):

3-րդ ենթախմբում ներառվել են երեխաներ, որոնց մայրերի մոտ հղիությունը նույնական զուգակցված է եղել հեստացիայի ախտաբանությամբ, իսկ երեխաների մոտ գրանցվել է հոգեշարժական զարգացման կասկածելի տեմպեր (կասկածելի զարգացում-ԿԶ): Այս ենթախմբում ՆՍՀ-ի միջին մակարդակը կազմել է $56,61 \pm 2,01$ ($p_1<0,001$; $p_{1-3}<0,001$; $p_{2-3}<0,001$): 4-րդ ենթախմբի երեխաները, որոնց մայրերի մոտ ներկա հղիությունը նույնական զուգակցված է եղել հեստացիայի ախտաբանությամբ, ունեցել են հոգեշարժական զարգացման տեմպերի զգալի դանդաղում (դանդաղ զարգացում - ԴԶ): Այս ենթախմբում ՆՍՀ-ի միջին մակարդակը կազմել է $88,55 \pm 1,70$ ($p_1<0,001$; $p_{1-4}<0,001$; $p_{2-4}<0,001$; $p_{3-4}<0,001$):

Այսպիսով, վիճակագրական վերլուծությունից հստակ երևում է, որ կա հետադարձ կոռելյացիոն կապ ՆՍՀ-ի մակարդակի և ՀՇ տեմպերի միջև: Բնչքան բարձր է ՆՍՀ-ի մակարդակը, այնքան ցածր են ՀՇ տեմպերը:

Ակնհայտորեն պարզ է, որ հսկիչ խմբի և 1-ին ենթախմբի ՆՍՀ-ի միջին մակարդակները հավաստիորեն չեն տարբերվում ($p_1=N.S$): Սա վկայում է այն մասին, որ միշտ չեն, որ հղիության ախտաբանությունը ազդում է երեխայի ՀՇ տեմպերի վրա:

Определение информативности нейроспецифической енолазы как способа ранней диагностики нарушений психомоторного развития у детей

С.Ф. Адамян

Целью этой работы было определение информативности нейроспецифической енолазы (НСЕ) как способа ранней диагностики нарушений психомоторного развития (ПМР) у детей. Были обследованы 136 новорожденных. Контрольную группу составили 20 детей от

здоровых матерей и с нормальным ПМР. Исследуемую группу составили 116 детей от матерей с патологией гестации и с разными темпами ПМР. НСЕ определяли иммунохемилюминесцентным методом. На основании полученных результатов установлено, что между уровнем НСЕ и темпами ПМР у детей есть обратная корреляционная связь. Чем выше уровень НСЕ, тем ниже темпы ПМР у детей до шести месяцев жизни. Очевидно, что достоверной разницы между контрольной группой и первой подгруппой нет ($p_1=N.S.$). Это говорит о том, что не всегда патология гестации влияет на темпы ПМР у детей.

Determination of informativity of neurospecific enolase as a method of early diagnostics of psychomotor development disorders in children

S.F. Adamyan

The goal of this work was determination of informativity of neurospecific enolase (NSE) as a method of early diagnostics of psychomotor development disorders in children. 136 newborns were investigated. Control group consisted of 20 newborns born from healthy mothers and with normal psychomotor development. The study group consisted of 116 children born from mothers with gestation pathology and different temps of psychomotor development. NSE was defined by immunochemiluminescent method. On the basis of the obtained results it was revealed that between NSE level and psychomotor development temps of children there is an inverse correlation. The higher is the NSE level, the lower are the temps of psychomotor development of children during the first six months of life. It is obvious that there is no reliable difference between the control group and the first subgroup ($p_1= N.S.$). This suggests that gestation pathology doesn't always influence the psychomotor development of children.

Գրականություն

1. Ангалева И. С., Лунева Е.Н., Лебедев А.С. Прогностические возможности специфических белков беременности. Мат. VI Российского форума «Мать и дитя». М., 2004, с. 13-14.
2. Артымук Н.В., Тришкин А.Г., Николаева Л.Б. Возможности диагностики хронической фетоплацентарной недостаточности. Медицина в Кузбассе, 2006, 2 (Спец. вып.), с. 5-8.
3. Бадалян Л.О., Курзанцева О.М. Детская неврология. М., 2001.

4. Барашнев Ю.И. Принципы реабилитационной терапии перинатальных повреждений нервной системы у новорожденных и детей первого года жизни. Рос. вестник перинатологии и педиатрии, 1999, 1, с. 7 - 13.
5. Баканов М.И., Алатырцев В.В., Подкопаев В.Н., Язык Г.В. Диагностическое и прогностическое значение нейроспецифических изоферментов креатининкиназы и енолазы при гипоксически-ишемических поражениях мозга у новорожденных детей. Медицинский научный и учебно-методический журнал, 2003, 15, с. 129-131.
6. Ватолин В.К. Ультразвуковая диагностика заболеваний головного мозга у детей. М., 2000.
7. Володин Н.Н., Медведев М.И., Рогаткин С.О. Перинатальная энцефалопатия и ее последствия – дискуссионные вопросы семиотики, ранней диагностики и терапии. Рос. педиатр. журн., 2001, т.1, 1, с. 4 - 8.
8. Гончарова О.В. Система диагностических и корректирующих технологий у детей с последствиями перинатальных гипоксических поражений ЦНС. Автореф. дис... докт. мед. наук, М., 2008.
9. Гончарова О.В., Баканов М.И., Муталов А.Г., Гречилов А.А., Джумагазиев А.А., Юсупова Э.С. Современные биохимические критерии диагностики перинатальных гипоксических поражений ЦНС у новорожденных детей. Рос. педиатр. журн., 2007, 4, с.12 - 16.
10. Дементьева Г.М. Оценка физического развития новорожденных. Пособие для врачей. НИИ педиатр. и детск. хирургии, М., 2000.
11. Журба Л.Т., Мастюкова Е.А. Нарушение психомоторного развития детей первого года жизни. М., 1981.
12. Камилова Н.М. Совершенствование прогнозирования риска перинатальной патологии. Журн. рос. общ-ва акушеров и гинекологов. 2006, 3, с. 13 - 14.
13. Павлова Н.Г., Фоменко Б.А., Русина Е.И. Значение функциональных и биохимических маркеров развития центральной нервной системы в антенатальном периоде для прогноза тяжести неврологических нарушений у новорожденного. Рос. вестник перинатологии и педиатрии, 1999, 6, с.4-9.
14. Рогаткин С.О., Турнина О.Н., Володин Н.Н. Перспективы иммунологического определения нейроспецифических белков для диагностики перинатальных поражений ЦНС у новорожденных. Педиатрия, 2001, 4, с.35-43.
15. Самсыгина Г.А., Бимбасова Т.А. Влияние перинатальной гипоксии легкой степени на развитие плода и новорожденного. Педиатрия, 1995, 3, с. 20 - 23.
16. Чехонин В.П., Лебедев С.В., Блиннов Д.В. и др. Патогенетическая роль нарушения проницаемости гематоэнцефалического барьера для нейроспецифических белков при перинатальных гипоксически-ишемических поражениях центральной нервной системы у новорожденных. Вопр. гинекологии, акушерства и перинатологии, 2004, 3, с.50-61.
17. Bodawy N., Kurinczuk J.J. Antepartum risk factors for newborn encephalopathy, the Western Australian Case Control Study. Br. Med. J., 1998, 317, p. 1549-1553.
18. Hahn J.S., Olson D.M. Etiology of neonatal seizures. NeoReviews. 2004, 5, 8, p. 327-334.
19. Horbar J.D. The Vermont Oxford Network: evidence-based quality improvement for neonatology. Pediatrics, 2002: 103, 1 suppl. E, p. 350 - 359.
20. Marro P.J. The etiology and pharmacologic approach to hypoxic-ischemic encephalopathy in the newborn. NeoReviews, 2002, 3, 6, p. 99 -104.
21. Oberhansli J., Extermann P., Jaggi E., Pfizenmaier M. Neuron specific enolase in asphyxiated newborns: association with encephalopathy and cerebral function monitor trace Arch. Dis. Child. Fetal Neonatal Ed., 1995, 72, p. 39 - 42.

22. *Palmer G.C., Suhey E. F., Yidiz A., Kivilcim G. et al.* Neuron specific enolase levels and neuroimaging in asphyxiated term newborns J. Child Neurol., 2002, 17, 11, p. 824 - 829.

Ուշադրության և տեսաշարժիչ ռեակցիաների կենսառիթմոլոգիական ցուցանիշների համեմատական վերլուծությունը

Ն.Է. Թաղևոսյան, Է.Գ. Գևորգյան, Լ.Գ. Վահանյան,
Ի.Գ. Թաղևոսյան, Է.Գ. Կոստանյան, Վ.Հ. Մալոյան

ՀՀ ԳԱԱ Լ.Ս. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ
375028, Երևան, Օրբելի եղբ. փողոց, 22

Բանալի բառեր. զիսուղեղի ֆունկցիոնալ վիճակ, ուշադրության կենտրոնացում, պարզ տեսաշարժիչ ռեակցիաներ, կարձատն տիրույթի կենսառիթմեր, սպեկտրային բաղադրիչներ, կոռելյացիոն, ռեգրեսիոն, դիսկրիմինանտ վերլուծություն

Արդի հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների կարևորագույն հարցերից մեկը մարդու զիսուղեղի ֆունկցիոնալ վիճակի (ՖՎ) ուսամնասիրությունն է: Գլխուղեղի ՖՎ, ըստ էության, նրա կարգավորիչ համակարգերի վիճակն է, որոնց գործունեությամբ է պայմանավորված օրգանիզմի կենսական, հարմարողական և կոմպենսատոր գործընթացների օպտիմալ կազմակերպման, իրավիճակային ներքին և արտաքին փոփոխություններին օպերատիվ և ֆիզիոլոգիապես աղեքվատ պատասխանելու հնարավորությունը: Կարգավորիչ և կարգավորվող համակարգերի կարևորագույն հատկանիշներից մեկը հանդիսանում է նրանց անկայունությունը, տատանողական բարդ դինամիկան: Որքան մեծ է տատանման դինամիկ տիրույթը, այնքան հեշտ է իրականացվում աղապտացիան արտաքին փոփոխությունների նկատմամբ: ՖՎ առանձնահատկությունները մեկնաբանելու նպատակով վերջին տարիներին մեծ կիրառություն է գտնում ուղեղի կարգավորիչ գործընթացների կենսառիթմոլոգիական բնութագրերի ուսումնասիրությունը, որոնք արտահայտվում է ամենատարբեր պարբերություններով՝ վայրկյանական, րոպեական, ժամային, օրեկան, ամսական և այլն [1; 3 - 5]:

Հոգեֆիզիոլոգիական հետազոտություններում կենսառիթմերի ալիքային կառուցվածքում առկա ժամանակային ոչ բոլոր տիրույթներն են ուսումնասիրված, հիմնականում դիտարկված են մեծ դիա-

պազոնի՝ օրական, շաբաթական, ամսական և այլ պարբերության ռիթմերը: Միևնույն ժամանակ ֆիզիոլոգիական ֆունկցիաների կարձատն տիրույթի (րոպեի, վայրկյանի պարբերությամբ) տատանումներն մնում են գրեթե չուսումնախրված:

Աշխատանքի նպատակն է հանդիսացել ուսումնասիրել հոգեֆիզիոլոգիական մի շարք գործընթացների, մասնավորապես կամային ուշադրության, ռիթմիկ և առիթմիկ ընթացքով տեսաշարժիչ ռեակցիաների բնականոն, ֆիզիոլոգիական նորմային բնորոշ ժամանակային փոփոխականության առանձնահատկությունները տատանումների կարձատն՝ վայրկյանային, դեկավայրկյանային և բոպեական տիրույթներում:

Նյութը և մեթոդները

Գործնականորեն առողջ, թվով 163, 17-19 տարեկան ուսանողների մոտ իրականացվել է գլխուղեղի ՖՎ-ի կենսառիթմոլոգիական բնութագրերի ուսումնասիրություն ուղեղի ՖՎ-ի գնահատման նպատակով մշակված համակարգչային համակարգի հոգեֆիզիոլոգիական հետազոտությունների բլոկի օգնությամբ [2]: Հետազոտվողներին հաշորդաբար ներկայացվել են երեք հոգեֆիզիոլոգիական թեստեր. I-ին՝ պարզ տեսաշարժիչ ռեակցիաների (ՏՇՈ) ժամանակը (գաղտնի շրջանը) որոշող ռեֆլեքսամետրիկ թեստ, տեսողական ազդակների ռիթմիկ ներկայացմամբ, որի դեպքում ազդակների միջև ժամանակային ինտերվալը կազմել է 1 վրկ, ազդակների քանակը՝ 128, թեստի տևողությունը՝ մոտավորապես 3 րոպե; II՝ ռոդ՝ նույն թեստը ազդակների պատահական հաջորդականությամբ՝ առիթմիկ ներկայացմամբ, միշազդակային ինտերվալը՝ 1-3վրկ, ազդակների քանակը՝ 256, թեստի տևողությունը՝ 10-12 րոպ; III՝ ռոդ՝ ուշադրության թեստ “Լանդուլտի օղակներ” կոռեկտուրային աղյուսակի կիրառմամբ, հաջորդաբար ներկայացվել են 11 աղյուսակներ, յուրաքանչյուր աղյուսակի իրացման ժամանակը կազմել է 64 վրկ, թեստի ընդհանուր տևողությունը՝ 12 րոպ.:

Յուրաքանչյուր թեստի ավարտից հետո հաշվարկվել են ՖՎ-ի գնահատման ինչպես ստանդարտ ցուցանիշներ (ավանդական վերլուծությամբ ստացվող ստատիստիկ ցուցանիշներ), այնպես էլ յեստերի կատարման ժամանակային դինամիկան բնութագրող որոշ մաթեմատիկական ցուցանիշներ: Տվյալների ստատիստիկ մշակումը իրականացվել է MS Excel և SigmaStat ծրագրային փաթեթների օգնությամբ: Կիրառվել են կոռելյացիոն, ռեզլեսիոն և դիսկրիմինանտ վերլուծության մեթոդները:

Արդյունքները և դրանց քննարկումը

Ինչպես հայտնի է, հոգեֆիզիոլոգիական թեստերին բնորոշ է կատարման ընթացքում որոշակի անկայունություն, որը դրսնորվում է թեստերում ուսումնասիրվող այս կամ այն ցուցանիշների վարիացիայով (փոփոխությամբ) ժամանակի մեջ: Մասնավորապես, մեր հետազոտությունում փոփոխականությունը արտահայտվել է տեսաշարժիչ ռեակցիաների գաղտնի շրջանի տատանմամբ ռեֆլեքսամետրիկ թեստերում և ուշադրության կենտրոնացման մակարդակի փոփոխմամբ կոռեկտուրային թեստում: Նշված ցուցանիշների ժամանակային փոփոխականության քանակական բնութագրերի մասին տվյալներ ստանալու նպատակով որոշվել է այդ ցուցանիշների դինամիկայի մաթեմատիկական (սպեկտրային, ավտոկոռելյացիոն) չափորոշիչները: Սպեկտրային պատկերում ուսումնասիրվել են կարձատև տիրույթի տատանողական բաղադրիչները, որոնք դիտարկվել են մինչև 10վրկ, 10 – 30վրկ, 30 – 60վրկ, 60 և ավելի պարբերությամբ տիրույթներում: Ռիթմոլոգիական ցուցանիշները ստատիստիկ համադրման են ենթարկվել ոչ միայն միմյանց հետ, այլ նաև հոգեֆիզիոլոգիական գործառույթների ավանդական վերլուծության մեթոդներով ստացված ցուցանիշների հետ:

Ուղեղային կարգավորիչ համակարգերի գործունեության արդյունավետության մակարդակի և տատանողական դինամիկայի մաթեմատիկական ցուցանիշների միջև հնարավոր ֆունկցիոնալ կապվածություն բացահայտելու նպատակով կոռելյացիոն վերլուծության են ենթարկվել ռեֆլեքսամետրիկ երկու թեստերի, կոռեկտուրային թեստի ստանդարտ գնահատման միավորները և ռիթմոլոգիական ցուցանիշները: Ռեֆլեքսամետրիկ թեստերում ստանդարտ գնահատման միավոր են հանդիսացել ֆունկցիոնալ վիճակի ինդեքսը (IFS), իսկ կոռեկտուրային թեստում՝ ուշադրության կենտրոնացման ինդեքսը (A-I): Վերլուծության արդյունքում պարզվել է, որ կոռելյացիոն կապերը թեստերի ստանդարտ գնահատման միավորների և դիտարկված տիրույթների տատանողական բաղադրիչների միջև արտահայտվում են տարբեր ուղղվածությամբ (աղյուսակ): Ինչպես ցույց են տալիս աղյուսակի տվյալները, դանդաղ տիրույթի՝ 30-60; 60վրկ և ավելի պարբերությամբ բաղադրիչների և ստանդարտ միավորների կոռելյացիոն կապերը ունեն բացասական ուղղվածություն, միևնույն ժամանակ վերջիններիս կապը արագ տիրույթի 10-30, 10 և ավելի ցածր պարբերությամբ տատանողական բաղադրիչների հետ արտահայտվում է դրական ուղղվածությամբ:

Աղյուսակ

*Թեստերի ստանդարտ գնահատման միավորների և կարճաժողովույթի
տատանողական բաղադրիչների կոռելյացիոն կապերը*

| Ցուցանիշներ | I-ին ռեֆլեքսամետրիկ թեստ IFS | II-րդ ռեֆլեքսամետրիկ թեստ IFS | Կոռեկտորա- յին թեստ A-I |
|----------------------|---------------------------------------|--|-------------------------------|
| Per. > 60 (վրկ) | -0.31* | -0.11 | -0.20 |
| Per. -30-60 (վրկ) | -0.24 | -0.10 | -0.11 |
| Per.-10-30 (վրկ) | 0.02 | 0.07 | 0.12 |
| Per. < 10 (վրկ) | 0.35* | 0.18 | 0.17 |
| ACF (r = 0) | -0.33* | -0.17 | -0.13 |


Ծանուցում. IFS – ռեֆլեքսամետրիկ թեստի ֆունկցիոնալ վիճակի ինդեքս; A-I կոռեկտորային թեստի ուշադրության կենտրոնացման մակարդակի ինդեքս; Per...սպեկտրային խսությունների հզորությունները տատանման պարբերությունների համապատասխան տիրություններում; ACF - ավտոկոռելյացիոն ֆունկցիայի գործակից: Ներկայացված են Պիրսոնի գծային կոռելյացիայի գործակիցները; (*) – գործակիցները արժանահավատ են $p < 0.05$ մակարդակում ըստ Սայուդենտի t – չափանիշի:

Հատկանշական է, որ կոռելյացիայի բացասական նշանի փոփոխությունը դրականի դանդաղ ոիթմերից արագներին անցնելու դեպքում, դրսորվում է բավականին հստակ և օրինաչափ բնույթ է կրում:

Այսպիսով, կարելի է ասել, որ տատանողական դինամիկայի դանդաղ ու արագ բաղադրիչների և ստանդարտ միավորների միջև բացահայտված կոռելյացիոն կապերի նմանատիպ ուղղվածությունը, ամենայն հավանականությամբ, վկայում է թեստերի կատարման ընթացքում հետազոտվողների ընթացիկ ֆունկցիոնալ վիճակի մասին:

Համապատասխան պարբերության տատանողական բաղադրիչների փոխհարաբերությունների առանձնահատկությունները ըստ ռեգրեսիոն վերլուծության, ներկայացված են նկար 1-ում: Ոսումնասիրվող բոլոր թեստերում հայտնաբերված դանդաղ ոիթմերը ($30-60; > 60$ վրկ) միմյանց հետ ցուցաբերում են բավականին արտահայտված դրական կոռելյացիա, այն դեպքում, եթե նրանց կապը արագ կենառիթմերի հետ ($10-30; <10$ վրկ) կրում է բացասական բնույթ՝ ունի հակառակ ուղղվածություն: Հատկապես կարևոր է նշել, որ այդ օրի-

նաշափությունը պահպանվում է անկախ կատարվող թեստի տեսակից և պայմանավորված չէ տրված թեստերում ներկայացվող տարբեր պահանջներից: Հարկ է նշել, որ հետազոտության սխեմայով ընտրվել են այնպիսի թեստային խնդիրներ, որոնք էապես տարբերվել են միմյանցից, օժտված են եղել տարբեր աստիճանի բարդություններով և իրականացման համար պահանջել են ուղեղային կարգավորման տարբեր մեխանիզմներ:



Նկ. 1. Դանդաղ և արագ ռիթմերի փոխկապվածության ռեզուսիոն կորերի
մատրիցա; Per ... սպեկտրային խտությունների հզորությունները
տատանման պարբերությունների համապատասխան տիրույթներում;
Մատրիցայի անկյունագծով ցույց է տրված վերլուծվող պարբերությունները և
նրանց բաշխման հիստոգրամները: Տրենդների վերընթաց ուղղվածությունը
վկայում է ցուցանիշների միջև ուղիղ համեմատական կապվածության մասին
և վայրընթաց ուղղվածությունը վկայում է հակադարձ կապվածության
մասին: Գծերի թեքվածության աստիճանը հանդիսանում է ցուցանիշների
միջև կոռելյացիոն կապերի սերտության արտահայտություն:


Ստացված տվյալները ցույց տվեցին համապատասխան տա-
տանողական բաղադրիչների փոխկապվածություն, ինչը հիմք տվեց
ենթադրել, որ դրանց դրսնորման առանձնահատկությունները որոշ-
վում են ոչ թե ուսումնասիրվող թեստերում առաջադրված խնդիրների
յուրահատկություններով, այլ հավանաբար, պայմանավորված են
հետազոտվողների գլխուղեղի ՖՎ-ի ֆիզիոլոգիական առանձնահատ-
կություններով:

Ոիթմոլոգիական ցուցանիշների՝ որպես գլխուղեղի ՖՎ-ի գնահատման առավել ինֆորմատիվ չափորոշիչների մասին մեր ենթադրության հաստատման համար իրականացվել է նաև դիսկրիմինանտ վերլուծություն: Ըստ այդ վերլուծական մեթոդի յուրահատկության, եթե ՖՎ-ի գնահատման գործընթացում ուսումնասիրվող ռիթմոլոգիական ցուցանիշները ֆունկցիոնալ նշանակություն չունեն, ապա նրանց միավորել որևէ ֆորմալ (մաթեմատիկական) ձևով չի ստացվի: Միևնույն ժամանակ, միավորվելու հնարավորության փաստը վկայում է ուսումնասիրվող ցուցանիշների և ՖՎ-ի որոշակի փոխկապակցվածության և դետերմինացիայի մասին: Դիսկրիմինանտ վերլուծության պահանջների համաձայն՝ բոլոր հետազոտվողները ըստ ռեֆլեքսամետրիկ թեստի ֆունկցիոնալ վիճակի ինդեքսի (IFS) բաժանվել են 3 խմբի: Առաջին խմբի մեջ ընդրկվել են ֆունկցիոնալ վիճակի ցածր ինդեքս, երկրորդ խմբում՝ միջին և երրորդում՝ բարձր ինդեքս ունեցող հետազոտվողները:

Վերլուծությամբ որոշվել է, խախտվում է արդյոք հետազոտվողների խմբավորումը, եթե ֆունկցիոնալ վիճակի ինդեքսի ցուցանիշները միավորվեն ուսումնասիրվող այլ պարամետրերի հետ: Եթե միավորման ժամանակ խմբերի կառուցվածքը չի խախտվում, ուրեմն կարելի է համարել, որ ուսումնասիրվող ցուցանիշները իրոք հանդիսանում են փոխկապակցված, փոխլրացնող ինֆորմատիվ ցուցանիշներ: Հակառակ դեպքում պետք է ընդունել, որ ուսումնասիրվող ցուցանիշներում պատահական բաղադրիչների մասնաբաժինը բավականաչափ մեծ է և հազիվ թե կարելի կլինի դրանք համարել ՖՎ-ի գնահատման հիմնավորված չափանիշներ (նկ. 2):

Նկար 2-ի Ա հատվածում նկատվում է, որ առանձնացրած խմբերին միավորած ցուցանիշները, ինչպիսիք են հետազոտվողների սեռը, խառնվածքը, ԲՆՀ գործունեության տիպը, ՖՎ բնութագրող ինֆորմացիա չեն կրում, քանի որ միավորման դեպքում ամբողջովին խախտվում է խմբերի կառուցվածքը, որևէ դասակարգում չի նկատվում, որը հաստատվում է նաև Ուիլքսի լամբդա վիճակագրության ոչ արժանահավատ արժեքով (0.825):

Այլ պատկեր է հաջորդ երկու գրաֆիկներում (Բ; Գ): Այստեղ դասակարգման ընթացքում օգտագործվել են 26 տարբեր ցուցանիշներ, այդ թվում նաև ռիթմոլոգիական: Ինչպես երևում է գրաֆիկներից խմբերը պահպանել են իրենց կառուցվածքը: Ուիլքսի լամբդա վիճակագրության արժեքները վկայում են դիսկրիմինանտության բարձր հզորության մասին:



Նկ.2. Ուժվածամետրիկ թեստի (ազդակների առիթմիկ ներկայացում) ֆունկցիոնալ վիճակի ինդեքտով առանձնացված էրեք խմբեր՝ ■ * - համապատասխանաբար բարձր, միջին և ցածր ինդեքս ունեցողներ;

Ա, Բ և Գ գրաֆիկներում, որպես դիսկրիմինացիայի պրեդիկտորներ օգտագործվել են հետևյալ ցուցանիշները.

Ա – առանձնացված խմբերի հետ միավորվել են հետազոտվողների

սեոր, հոգեբանական խառնվածքի անհատական- տիպային առանձնահատկությունները, նեյրոտիպի մակարդակը բնութագրող ցուցանիշները:

Բ – միավորվել են ուսումնասիրված բոլոր տեստերում հայտնաբերված անկայունության մակարդակը (փոփոխականությունը) բնութագրող ցուցանիշները

Գ – միավորվել են Լանդրուֆի օղակներ կոռեկտուրային թեստի երկու ներկայացումների և ռեֆլեքսամետրիկ թեստի երկու տարբերակների հաճախականացյին սպեկտրի կենսառիթմոլոգիական բաղադրիչները:

Դիսկրիմինանտ վերլուծությունը ցույց տվեց, որ զլխուղեղի կարգավորիչ համակարգերի կենսառիթմոլոգիական բնութագրերը ՖՎ զնահատման պատահական չափորոշիչներ չեն:

Այսպիսով, կարձատև տիրույթի կենսառիթմոլոգիական ցուցանիշները ՖՎ-ի զնահատման ավելի զգայուն և ինֆորմատիվ չափորոշիչներ են: Դրանք հանդիսանում են հենց այն մարկերները, որոնք, համարելով հոգեֆիզիոլոգիական թեստերի մյուս ցուցանիշների հետ, կարող են զգալիորեն բարձրացնել զլխուղեղի ՖՎ-ի զնահատման հուսալիությունը, ինֆորմատիվությունը և լիարժեքությունը:

Поступила 30.06.11

Сравнительный анализ биоритмологических показателей внимания и зрительно-моторных реакций

Н.Э. Татевосян, Э.Г. Геворкян, Л.Г. Ваганян, И.Г. Татевосян,
Э.Г. Костанян, В.А. Малоян

Сравнительный анализ биоритмологических показателей рефлексометрического и корректурного тестов показал, что выявленные с помощью математического анализа компоненты колебательной динамики, принадлежащие краткосрочному диапазону с секундной и минутной периодичностью, несут значительную информацию о функциональном состоянии мозга испытуемых. Обнаружена взаимосвязь между ритмологическими показателями соответствующего диапазона в применяемых нами тестах, которая не обусловлена особенностями предъявленных задач, а скорее отражает физиологические характеристики текущего функционального состояния мозга.

Comparative analysis of biorhythmological indices of attention and visual-motor reactions

N.E. Tatevosyan, L.G. Vahanyan, E.G. Gevorgyan, I.G. Tatevosyan,
E.G. Kostanyan, V.A. Maloyan

Comparative analysis of biorhythmological indices of reflexometric and corrector tests aimed at the functional state assessment showed that fluctuation components of short range (second, deca-second, minute) carry significant information about functional state of respondents. It was revealed that fluctuation components of respective ranges in different tests are inter-linked, which is not related to peculiarities of the tasks of tests, but rather expresses the physiological characteristics of the current functional state of brain.

Գրականություն

1. Геворкян Э.Г. Отражение функционального состояния мозга в биоритмологических характеристиках центрального управления сомато-вегетативными и психофизиологическими функциями. В сб.:Современные аспекты радиационной медицины и ожогов. Ереван, 2003, с. 101-108.
2. Геворкян Э.Г., Оганесян Н.М. Оценка функционального состояния мозга с помощью компьютерных технологий диагностики. Мед. наука Армении НАН РА, 2006, т. XLVI, 1, с.106-110.
3. Геворкян Э.Г. О флюктуациях функциональной активности мозга человека. Международная научная конференция “Актуальные проблемы интегративной деятельности и пластичности нервной системы”. Ереван, 2009.
4. Комаров Ф.И. (ред.) Хронобиология и хрономедицина. Руководство. М., 1989.
5. Степанова С.И. Биоритмологические аспекты проблемы адаптации. М.,1986.

**Իրանի Սարի քաղաքի ավագ դասարանների
աշակերտների սրտի գործունեության
փոփոխությունները քննաշրջանում**

Ս.Ս. Մինասյան, Է.Ս. Գևորգյան, Ռ. Գոլիսքարդի

*Երևանի պետական համալսարան, կենսարանության ֆակուլտետ,
Տուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն
0025, Երևան, Ալեք Մանուկյանի փ., 1*

*Բանալի բառեր՝ տարբերակված ուսուցում, կարդիոինտերվալոգիր,
քննաշրջան, սրտի ռիթմի տատանողականություն,
լարվածության ցուցիչ*

Գրականության մեջ անբավարար է լուսաբանված մասնագիտական դպրոցներում սովորող դեռահասների և պատանիների ֆիզիոլոգիական ֆունկցիաների վիճակը քննաշրջանի ընթացքում: Ակնհայտ է, որ դպրոցական տարիքում ավարտվում է օրգանիզմի վեգետատիվ նյարդավորման վերակառուցումն ու ուժեղանում սրտի ռիթմի ինքնակարգավորումը [3]: Դեռահասության շրջանը բնորոշվում է նյարդաներգատական բուռն վերակառուցումներով, օրգանիզմի կազմաբանական և ֆիզիոլոգիական ուժգին վերակառումներով, կարգավորման մեխանիզմների և գործառական մի շարք համակարգերի գործունեության բարձր լարվածությամբ, արտաքին միջավայրի փոփոխություններին հարմարման սահմանափակ հնարավորությամբ [1, 7, 8-11]: Քննությունների հանձնումն ուղեկցվում է օրգանիզմի բոլոր օրգանների և համակարգերի ֆիզիոլոգիական բարձր լարվածությամբ, էներգածախսերի ուժեղացմամբ, որը սովորողների մեծամասնության մոտ հանգեցնում է առողջության վատթարացմանը և վեգետատիվ ֆունկցիաների խանգարմանը: Մի շարք գիտնականների կարծիքով քննությունից առաջ և այն հանձնելուց անմիջապես հետո նկատվում են սիրտանոթային համակարգի ցուցանիշների արտահայտված փոփոխություններ, որոնք վկայում են ծայրամասային անոթների արյան ընդհանուր հոսքի մեծացման մասին: Հանրակրթական դպրոցում և վարժարանում սովորող աշակերտների մոտ միանման քննական իրավիճակներում զարգանում են անհատական հոգեֆիզիոլոգիական

տարբեր ռեակցիաներ՝ կապված սպասվող քննական գնահատականի, աշակերտի պատրաստվածության, տարիքի և սեռի հետ [2, 4-6, 9-12]:

Չնայած ներկայացված գրական տվյալների առկայությանը, հոգեհոգական լարվածության պայմաններում ֆիզիոլոգիական առանձին ցուցանիշների տարիքային դինամիկային վերաբերող շատ հիմնահարցեր դեռևս մնում են վիճելի և չլուծված: Քննական սթրեսի ժամանակ անբավարար են ուսումնասիրված ավագ դպրոցի սաների հոգեհոգական կարգավիճակի և նեյրովեգետատիվ ցուցանիշների փոփոխություններն ու դրանց համահարաբերակցությունը:

Ուստի մեր հետազոտություններում ուսումնասիրվել է Իրանի տաղանդավոր աղջիկների և տղաների դպրոցների IX-XI դասարաններում սովորող 120 աշակերտների (60 աղջիկ և 60 տղա) սրտի ռիթմի ցուցանիշների փոփոխությունները քննաշրջանի ընթացքում:

Նյութը և մեթոդները

Ուսումնասիրությունները կատարվել են Իրանի Սարի քաղաքի Շահիդ Բեհեշտիի անվան տաղանդավոր աղջիկների և տղաների դպրոցներում:

Հետազոտության խնդիրների համաձայն կատարվել է աշակերտների առողջական տվյալների վերլուծություն ու ընտրվել են առողջության շեղումներ չունեցող աշակերտներ կամավոր սկզբունքներով: Հետազոտվողների անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով U.Uպիլքերգեր-Խանինի թեստով որոշվել է նրանց անհատական (ԱԱ) և իրավիճակային անհանգստության (ԻԱ) աստիճանը: Ըստ ԻԱԹ-ի հարցաթերթիկի գնահատվել են ինքնազգացողության (Ի), ակտիվության (Ա) և տրամադրության (Տ), իսկ ըստ Դ. Այզենկի՝ նեյրոտիպի մակարդակները:

Աշակերտների սրտի ռիթմի վերլուծության նպատակով առաջին ստանդարտ արտածմամբ պառկած վիճակում գրանցվել է նրանց էլեկտրասրտագիրը (ԷՍԳ): ԷՍԳ-ի ազդակները էլեկտրասրտագրիչից վերափոխվելով ձայնային հաճախության փոխանցվել են մագնիտոֆոնի ելքին, ապա ավտոմատ թվային վերափոխչով Pentium IV համակարգչին, որը վերամշակվել են համաձայն Ռ. Բանսկու (1984) վարիացիոն պուլսաչափման չափանիշների: Յուրաքանչյուր հետազոտվողի համար կառուցվել են հիստո-, ռիթմա-, սկատեր- և սպեկտրագրեր: Որոշվել են մոդան (Mo), մոդայի տատանասահմանը (AMo), վարիացիոն թափը (ΔX), կարդիոինտերվալների տատանողականության գործակիցը (V_k): Հաշվարկվել են նաև կարգավորող համակարգերի

լարվածության ցուցիչը՝ $L_8=AMo/2\Delta X^*Mo$; վեգետատիվ հավասարակշռության ցուցիչը՝ $V_2\beta=AMo/\Delta X$; ռիթմի վեգետատիվ ցուցիչը՝ $\Omega\beta\gamma=1/Mo^*\Delta X$; կարգավորման գործընթացների աղեկվատության ցուցիչը՝ $\Psi_{AU3}=AMo/Mo$:

Բոլոր հետազոտությունները կատարվել են 3 փուլով. ուսումնական կիսամյակի հարաբերական հանգիստ օր (Փիզիոլոգիական նորմա), քննությունը հանձնելուց անմիջապես առաջ և քննությունը հանձնելուց հետո: Ստացված տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է ըստ Ստյուդենտի և շափանիշի <>Biostat></> համակարգային ծրագրով:

Արդյունքները և դրանց քննարկումը

Հետազոտությունների առաջին տարբերակում ըստ հոգեբանական թեստ-հարցաթերթիկների արդյունքների բացահայտվել է, որ հարաբերական հանգիստ պայմաններում IX դասարանի աղջիկների ԻԱ-ի մակարդակը կազմել է 30.8 ± 1.7 , իսկ տղաներինը՝ 36.6 ± 2.4 միավոր: Ըստ որում աղջիկների 16.7%-ը ունեցել են ԻԱ-ի ցածր մակարդակ (21.1 ± 1.2 միավոր), 48%-ը՝ միջին (32.3 ± 3.2 միավոր), իսկ 34%-ը՝ բարձր (47.2 ± 2.4 միավոր): Տղաներից ԻԱ-ի բարձր մակարդակ ունեցել են 36.1%-ը (49.2 ± 2.1 միավոր), միջին՝ 57.6% (36.4 ± 3.0 միավոր), իսկ ցածր՝ 6.3%-ը (22.8 ± 3.1 միավոր): Աղջիկներին հիմնականում բնորոշ է եղել ինքնազնահատման միջին, իսկ տղաներին՝ բարձր մակարդակ: Նախաքննական շրջանում ԻԱ-ն բարձրացել է. աղջիկներինը կազմել է 42.3 ± 3.4 , իսկ տղաներինը՝ 49.8 ± 2.6 միավոր:

IX դասարանում նորմայում դիտվել է տղաների սիմպաթիկ նյարդային համակարգի ցուցանիշների համեմատությամբ: Այսպես, աղջիկների L_8 -ն եղել է 98.55 ± 9.04 , իսկ տղաներինը՝ 121.25 ± 10.41 պ.մ.: Ըստ L_8 -ի՝ աղջիկների 70%-ը եղել են վագոտոնիկներ, 30%-ը՝ նորմոտոնիկներ, մինչդեռ տղաների 10%-ը եղել են վագոտոնիկներ, 80%-ը՝ նորմոտոնիկներ, իսկ 10%-ը սիմպաթոտոնիկներ (աղ.):

Նախաքննական շրջանում երկու խմբի հետազոտվողների մոտ դիտվել են սրտի ռիթմի տատանողականության ցուցանիշների զգալի տեղաշարժեր: Տղաների մոտ գրանցվել է L_8 -ի մեծացում նորմայի համեմատությամբ 86.7%-ով ($p<0.001$): Միաժամանակ նկատվել է AMo -ի $\Omega\beta\gamma$ -ի, $V_2\beta$ -ի և Ψ_{AU3} -ի ցուցանիշների մեծացում համապատասխանաբար $19.8(p<0.05)$, 51.7 , 46.4 և 47.5% -ով ($p<0.001$), ինչը վկայում է սրտի ռիթմի կարգավորման մեխանիզմում սիմպաթիկ լարվածության գերակշռման մասին (նկ.): Վերջինիս ապացույն է նաև

Mo-ի և ΔX-ի նվազումը համապատասխանաբար 18.3 ($p<0.01$) և 18.2%-ով ($p<0.01$): Հետքնական շրջանում բոլոր հետազոտված ցուցանիշները նախաքննական մակարդակի համեմատությամբ նվազել են՝ սակայն մնալով ելակետայինից բարձր մակարդակի վրա:

Աղյուսակ

*Մրտի վեգետատիվ կարգավորման տարբեր տիպ ունեցող IX-XI
դասարանների աշակերտների տոկոսային հարաբերության
փոփոխությունները քննաշրջանում*

IX դասարան

| Մրտի կարգավորման տիպը | Աղյուկներ | | | Տղաներ | | |
|-----------------------|-------------|-------------------------|-------------------------|-------------|-------------------------|-------------------------|
| | Նորմա, % | քննությունից առաջ, % | քննությունից հետո, % | Նորմա, % | քննությունից առաջ, % | քննությունից հետո, % |
| Վագոտոնիկ | 70 | 10 | 15 | 10 | - | - |
| Նորմոտոնիկ | 30 | 60 | 85 | 80 | 25 | 65 |
| Սինպաթոտոնիկ | - | 30 | - | 10 | 75 | 35 |

X դասարան

| Մրտի կարգավորման տիպը | Աղյուկներ | | | Տղաներ | | |
|-----------------------|-------------|-------------------------|-------------------------|-------------|-------------------------|-------------------------|
| | Նորմա, % | քննությունից առաջ, % | քննությունից հետո, % | Նորմա, % | քննությունից առաջ, % | քննությունից հետո, % |
| Վագոտոնիկ | 50 | - | 30 | 20 | 5 | - |
| Նորմոտոնիկ | 35 | 75 | 60 | 70 | 25 | 70 |
| Սինպաթոտոնիկ | 15 | 25 | 10 | 10 | 70 | 30 |

XI դասարան

